2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության կողմից 2025 թվականին հրապարակվել են հետևյալ տեղեկությունները.

I. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի խորհրդի որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր վարչակազմակերպական կառուցվածքը: Նոր վարչակազմակերպական կառուցվածքն ուժի մեջ է կմտել 2025 թվականի փետրվարի 20-ից (20.02.2025թ.):

II. 2024 թվականի անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

III. Խորհուրդը որոշում է կայացրել 25.02.2025 թվականին ESOP-ի շրջանակներում մարտի 1-ից մարտի 26-ը տեղաբաշխում իրականացնելու մասին,

IV. 30.04.2025 թվականին Խորհուրդը որոշում է կայացրել աշխատակիցների բաժնետիրացման շրջանակներում տեղաբաշխած 220 000 հատ սովորական (հասարակ) բաժնետոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում ցուցակելու համար հայտ ներակայացնել և կնքել նշված արժեղթերի ցուցակման պայմանագիր,

V. 03.06.2025 թվականի տարեկան ժողովի որոշմամբ հաստատվել է Կանոնադրության նոր խմբագրությունը, որով փոփոխվել է ESOP-ով պայմանավորված կանոնադրական կապիտալը և Ժողովի որոշ իրավասություններ վերապահվել են Խորհրդին,

VI. 2025 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ տեղեկությունները:

VII. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը 03.06.2025 թվականին որոշել է.

<u>շահութաբաժինների վճարման վերաբերյալ</u>

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2024 թվականի դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 1 596 642 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր ինսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 36 (երեսունվեց) ՀՀ դրամ:

2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/07/2025թ.-ը ներառյալ, դրամական միանվագ

փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2025 թվականի ապրիլի 30-ի օրվա վերջի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

<u>թողարկողի ընդհանուր ժողովի և կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների փոփոխությունների վերաբերյալ,</u>

Կանոնադրությամբ ժողովի իրավասությանը պատկանող 8.2 կետի 11-րդ ենթակետը և 1-ին, 15-րդ, 16-րդ. և 19-րդ ենթակետերի որոշ մասերը վերապահել Խորհրդի իրավասությանը:

<u>կանոնադրական կապիտալի փոփոխության վերաբերյալ</u>

10.09.2024 թվականի ժողովի որոշմամբ հաստատված Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հիման վրա 220,000 հատ սովորական հասարակ անվանական բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 7,700,000 ՀՀ դրամով:

VIII. ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի 20.06.2025 թվականին որոշել է.

- Ընկերության «Ռաֆֆի» (ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ռաֆֆու փողոց 55/1 հասցեում գտնվող, հաշվառման համարը՝ Մ-5/31) մասնաճյուղը 2025թ. հունիսի 25-ից փակել,
- Ընկերության «Օհանով» (ՀՀ, ք. Երևան, Օհանով 26/9 հասցեում գտնվող, հաշվառման համարը՝ Մ-5/35) մասնաճյուղը 2025թ. հունիսի 23-ից փակել,

IX. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն 29.07.2025 թվականին ցուցակման հայտ է ներկայացրել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում աշխատակիցների բաժնետիրացման արդյունքում տեղաբաշխված 220,000 հատ սովորական (հասարակ) բաժնետոմսերը ցուցակելու համար:

X. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի խորհրդի որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր վարչակազմակերպական կառուցվածքը: Նոր վարչակազմակերպական կառուցվածքն ուժի մեջ է կմտել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից (01.12.2025թ.):